

Կարճ այլ հոգեգուարճ նամակաւդ, որ երէկ ինձ հասաւ, գեղնաթոյր ու վարդաբոյր, ստացայ անկեղծագոյն ողջոյններդ ալ, դառնազին գանդատներուդ և մտերմիկ կշտամբանացդ հետ Ողջոյններդ, գանգատանքդ ու կշտամբանքդ՝ արդիւնք ըլլալով սերտ բարեկամութեանդ եւ ջերմ սիրոյդ առ իս, յուզեցին զիս եւ ուրախացուցին : — Գրչիս ու ոճոյս — որոնց քեզ եւ քեզ նման սակաւաթիւներու հաճելի լինելն է իմ մեծագոյն հաճոյքս ալ — սիրողն ըլլալդ անգամ մ'ալ յայտնելով, կ'ապտակես, չար եւ ծոյլ կ'անուանես զիս, զի չեմ գրեր ժամանակէ մ'ի վեր : Սիրուած ձեռներէ ընդունուած ապտակներ՝ դըդուանաց եւ համրոյրներու չափ քաղցր են : Այլ սխալ կը մեկնես — եւ կը մեղանջես — լուռութիւնս ծուռութեանս վերադրելով : Ձես գիտեր, կամ չես մըտածեր կ'երեւի՝ թէ գիրն ծուռութեան ժամերու սրտուդ է այսօր, եւ մեզ համար՝ լռելն՝ ապացոյց է մեր գործունէութեան, — խօսմանց, խորհրդոց եւ երազոց մարմին տալ է գրելն . եւ մարդ պէտք է անգործ անդրադ ժամեր ունենայ՝ ընուրթեան մի չքեզ ու լուսագեղ տեսարանի գիւմաց, ծաղկանց բուրմանց ու թռչնոց գեղգեղանաց աղբեցութեանց եւ զովահոս տերեւախիտ ծառոց հովանւոյն տակ նստած, կամ առ եզերք մի քաղցրակարկաժ սիրահառաջ վտակի եւ կամ պարզապէս մի խաղաղ ու լռին սենեկի մէջ առանձին մի սեղանի ու թղթի վերայ՝ ձեռն ի ձախտի կամ գլխահակ խորհելու եւ գրելու, արթուն քնանալու եւ երնդելու կամ երազոց հրաշալի աշխարհին մէջ՝ արթննալու համար : Եւ չես մտածեր թէ՛ այդ ցանկալի, այդ սիրալի՝ պարսպոյ ժամերն ինձ դըժուարին — եթէ ոչ անկարելի — է գրու-

նեւ ներկայ եղանակին մէջ, Վոսիորի լուսաթափանց ափանց վերայ, ի Պէօլիւք տէրէ: Յունիսի մէջ ենք. գեղակապոյտ երկնից վերայ ամէն օր այգուն այգուն շողշողուն կը թագաւորէ արեգակն և ջրն՝ անապակ լուսոյ անվերջ ու տաք հեղեղներ կը թափէ ծովուն վերայ՝ որոյ մութ կապոյտ ծածկուն մակարդակն՝ այն երկնահոս գգունանց տակ սիրատարփ սարսուռ մը կ'զգայ կարծես եւ իւր խորհրդաւոր ու խոր ծոցին մէջ կ'ուզէ ընդունիլ ու խեղդել անոր բոլոր ճառագայթները. լեռանց վերայ՝ ուր ոստախիտ կաղնիք, հովանուտ թաւաւոր ու ամպաբերձ պիստակներն ի շունչ հեղաբոյր զեփրուին կը տատանին նաղելազին եւ կ'օրօրին սարեակ ու սոխակին երգերով ու ճպումնց ճրճըններով, եւ գեղանկար երկար ծովափին վերայ՝ ուր ուղղաշար ծառոց դիմաց կանգուն ճոխ տանց ու պարտիզապատ ապարանաց ու պանդոկներու փակ փեղկերու ետեւ՝ նորապսակ, նրբահոտակ ու գեղադիտակ էակներէ հեւ ի հեւ կ'արտասանուին մեղկ ու թեթեւ մրմունջներ, սիրաթոթով տրտունջներ...: Եւ ահա կ'սկսին սուլել շողենաւք. պէտք է Պոլիս երթալ, խաներու, վաճառատանց կամ կրպակներու մէջ, օրն ի բուն քրտամբ թաթախուն կամ փողով ողողուն, մինչեւ իրիկուն գործով — զիրար խաբելով — գաղլիլ ու դրամ շահիլ: Եւ երեկոյին, վերստին նըստիլ շողենաւ, եւ Վոսիորն քերելով, ծովուն զով հովուն կուրծք տալով, օրուան հոգերն ու վաստակը թօթափել նաւուն արձակած կաթնագոյն փրփուրին մէջ եւ՝ զուարթ ու կաղըութեալ՝ վերջալուսոյն դառնալ ի տուն: — Գիշերն ալ երբ երկինք վառեն իրենց սլողուն ջահերն ու ձիւնածերպ կամ թխալէմ ամպոց մէջ ծիծաղի լուսնակին դէմքն հիւանդազին, լամբարներով և աշտանակներով լուսաւորուին տանց դահլիճներն ու պատուհաններն, ու ծովափին նուագածուաց խումբն ալ սկսի եւրոպական եղանակներ հնչեցնելով ամէնուն արտից ու ոտից միանգամայն աղդել խանդ ու եռանդ եւ թունդ հանել հեռաւոր ափանց ու քնացող լեռանց արձագանքն, եւ ահա կը բացուին դռներք, գունդ ի գունդ դուրս կը թափին արք, կանայք եւ աղջիկներ, տարեցք եւ երիտասարդք եւ կ'սկսին պտըտիլ, խմբովին կամ զոյգ զոյգ, կամ նստիլ նրագագածուաց դէմ, ու ժպտիլ ի լուր Պէօլի ցայգանուագին, հառաչել Գաբիէի երգովն, եւ կամ դաշնակաւոր մի վալսի շէշտերով՝ մոռք յածիլ ձմրան պարահանդէսներու մէջ եւ ո՛ր եւ է քաղցր կամ դառն մի յիշատակով փայրիկ մը յուզիլ կամ մխիթարուիլ...: Ամբոխէն ու նուագէն հեռու, ծովուն վերայ հեղիկ սուրացող մակոյկներու մէջ ալ՝ կան աննշմարելի զոյգեր. բորբոքեալ հոգիներ, անշուշտ, որք իրենց սրտի կրակն մարելու համար հոգէն հեռի ու ջրոյն մօտ կ'ուզեն գտնուիլ. եւ կամ սրտորս գեղունիներ՝ որք իրենց զգացմանց ու բնութեան նմանակ հայելին ու պատկերն եղող մշտաշարժ եւ անկայուն ջրոյն վերայ կը սիրեն մրմնջել իրենց խոստումներն ու երգումները: Թուխ ու կտր ծառոց շուքին տակ ալ սիրամուրար զոյգեր կը նշմարուին մերթ ընդ մերթ ու կ'անհետանան, ու կը հեռանան, չեմ գիտեր ո՛ր, ծովուն եզերքն ի վար կամ ի վեր. — զի մի անմեկնելի, անդիմադրելի զօրութիւն ունի ծովն՝ որ առ ինքն կը ձգէ միշտ սրտով ու մտքով հիւանդներն — սիրահարներն ու

բանաստեղծներն — որոց առաջինք իրենց կրից ու տենչից անհունութիւնը կարծես կը տեսնեն անոր մէջ, եւ վերջինք ալ իրենց ուղեղի կամ երեւակայութեան յեղյեղուկ եւ լոյծ փիճակն...: — Արդ, կարելի՞ է թողուլ այս շարժուն ու կենդանի գիշերային կեանքն ու կեդրոնն եւ 20-25 աստիճան տաքութեամբ օժտեալ մի խոցիկի մէջ ծռիլ սեղանին վերայ, անձայն եւ առանձին, ու գրել...: Եթէ կարելի իսկ ըլլայ, կը կարծես որ գրչէն ու մտքէն բռնի՝ խլուած բաներ, մի տենդի ժամու մէջ անգիտակցաբար բերնէն դուրս յորդող — եւ երբեմն մեր թերթերու մէջ երեւցող — անչափ ու անկապ, թերեւս գերիմաստ այլ բոլորովին անհասկանալի զառանցանաց կամ դրական բանագրուչանաց նման արտադրութիւններ չը լինին...: Խօսքդ ետ ա՛ռ ուրեմն. ծոյլ չեմ ես. ընդհակառակն, այնքան զբաղեալ եմ որ գրելու ժամանակ չեմ գտներ:

Եթէ անցեալ ձմեռ Գաղղիական թատրոնն առիթ կ'ընծայէր ինձ անձամբ զբօսնելէ յետոյ գրչով ալ զբօսնելու, գարնան սկիզբէն ի վեր եւ այժմ կայ — եւ յաւիտեան ալ պիտի մնայ — մի թատերադէմն որոյ հանդիսատեսն է եւ պիտի լինի հաւասարապէս եւ ճիշտապէս ամէն հայ. — մեր ազգային գործոց ու կենաց թատրոնն է այն — յորում ամէն օր մի նոր վարագոյր կը բացուի, մի նոր տառ, ողբերգութիւն կամ զաւեշտ կը խաղուի, բնական կերպիւ, կենդանի եւ գերին տէր գերասաններով, որոց ամէնուն գրեթէ մի եւ նոյնն է հեղինակն՝ Շահն եւ յուշարարն՝ Կիբէ: Յաւալին այն է որ շատ ատեն եւ մեծաւ մասամբ՝ փոխանակ պարզապէս զբոսաբանի գրածներէն եւ անվաս կատակերգութեանց՝ սլոգանի եւ գայթակղեցուցիչ ընտանի տառաքներ կը ներկայացուցուին, անբարոյական եւ աղտեղի տեսարաններ ի հանդէս կը բերուին այդ բեմին վերայ: Ազգին Պատրիարքէն սկսեալ ցյետին սարկաւազն, տէրութեան բարձրագոյն պաշտօնատարէն ցյետին կոշիկաւարն հոն կ'երեւին, կը խօսին, կը շարժին ու կը գործեն, այլ, աւա՛ղ, երբ այդ խաղերէ միոյն վերայ կը փակուի վարագոյրն եւ հանդիսականք աննպաստ տպաւորութեամբք եւ բարոյական ու մերթ ալ նիւթական կործանումով կը հեռանան՝ ահա կը բացուի վարագոյրն մի ուրիշ խաղի վերայ, աւելի ազեղ, աւելի սեւ եւ աւելի գայթակղական:

Կրկնամուսնութեան խնդիր մ'է որ օրուան խայտառակ խաղին նիւթը կը կազմէ: Շահապազ Կարապետ, այր չափահաս, շուրջ յիսունամեայ, առաջնահարգ փաստաբան, յարգեալ ու մեծարեալ դատաւոր, էֆէնտի վսեմախոյլ, որ ճոխ եւ հնչուն դրամածխտով տասնեակնոց տարի յառաջ կնութեան կ'առնուէ պատուաւոր ընտանեաց մի աղջիկն, վեց զաւակաց կը լինի հայր, մի քանի տարի յառաջ կ'սկսի մտերիմ յարաբերութիւններ հաստատել մի այլ այրի կնոջ հետ՝ եւ այս՝ ա՛յնքան անքօղ եւ անծածուկ կերպիւ որ իւր ամուսնոյն արդար ցասմանն ու կըշտամբանաց տեղի կուտայ. կը շարունակէ դարձեալ մի կողմանէ իւր ընտանի գրեթէ անհնաճ եւ միւսէն ալ իւր անպատու կառ տեսակցութիւնքն. վերջապէս երկու տարւոյ չափ առաջ իւր կինն անձնական առողջութիւնն դարմանել տալու եւ թերեւս քիչ մ'ալ սոյն անտանելի կենակցութեան առօրեայ չարչարանքէն պրծելու

համար՝ կը մեկնի ի Բարիզ, իւր մօր եւ ահա Կարապետ Շահապազ անդադրապիշ շարունակելով իւր սուրբ եւ մաքուր առ հոմանին, մի քանի օր առաջ, նոր կ'ընէ տանիք մը կազմելու, Հայկայ բազմաբնակարան սերունդն իւր անկորուստ տարածքին նաց օրհնեալ պտուղներով բազմապիւսեմ ծափելի նպատակաւ, ինքն, հայր պարէն վեց զաւակաց, այսօր նոյն այրի կնոջն եւ թերեւս օր մ'ալ օրէնքը խաղաղ մի լու մոռք, չեմ գիտեր ո՛ր կարգալոյծ գաղափար հանայի ձեռք ինքզինքն կրկին ամուսնանայած կը հռչակէ, եւ իւր տան անկիւնը, կը բազմեցնէ իւր վարդաշուրթն եւ ամբողջ ալ լեւծ նոր հարսն...: Սոյն անտաղիւս վարժսակաղրութեան ալ կնքահայրութեան եւ, ստաբեր պաշտօնը կը կատարէ Մեղի գուլի Աղեքսանդր Կըյուզուլին Պատրիարքն եւ Վարչութիւն. Կրօնական Ժողովն ու գայթակղի բարեկամք ալ իրար կ'անցնիլ կոչեն զայն, շատ կը վիճին, կը խնայահարկ կը ջանան, կարելին եւ արեւելի կ'ընեն, կ'սպառնան, այլ ի գլխին կը յամառի մոլորեալն, ո՛չ մի գղջում մի գրաւոր յայտարարութիւն ընելով՝ կ'առնու իւր ամբարշտ վարուց եւ բէն գործին ծանրութեանն ի դարման վերջապէս ազգային իշխանութիւնը մի դար եւ կորովի որոշմամբ կը վճռէ բազմապէս եկեղեցեաց բեմին եւ ջանքերէ զայն եկեղեցեաց բեմին եւ ջանքերէ խելքային կենաց, արժանապատուութեան, անուան եւ պաշտօնի վայելքը եւ մանաւանդ ազգային կրօնի քակտելի դարաւոր օրինաց դէմ չ'ընդդէմ տանալ եւ քար գայթակղութեան ջրնեղու ամենազոր նկատուունքն, անհրաժեշտ իւր կրից զոհել ամէն բան, միւս վեց անմեղ մանկանց անաղարտ անկողնի վրէժի կ'ընեն զմարդ.՝ կ'ըսէ Ռօշֆօր Ահա՛ ապացոյցն «Մարդիկ աւելի կ'ախժին ա՛յն կիներէ՛ որք արդահատանաց ժանի են, քան անոնցմէ որոց վրայ զմէլի կ'արժէ» ըսած է Տիկ. որ ժիրարտ եւ Լօրէ տէ՛ վէկա սպանիացի գրադարսէլ յետոյ թէ՛

Այր Խոսեմ պէտք չէ փորձէ՛ երկոքն իսկներն՝ որոնք են՝ կինն եւ ապակին.

կը յաւելու. «Ընտանեկան վէճք ու զբոսութիւնք այն փորձաքարն են որով կրկնապէս անհրաժեշտ է անսիրտ մարդէն» Որքան ճշմարիտ են այս խօսքերն:

Եւ ահա առաջի անուէ մ'ալ շէշտ վսեմ Կարապետ էֆ. Շահապազ՝ նսեմ Կարապետ Շահապազի փոխուեցաւ այս կնոջ առաւօտ յորում եկեղեցեաց մէջ ընդ իրար կարգացին բանադրանքն եւ լորն ալ մանաւանդ մեր գիւղի Ս. Հայր — պերճաբանութեան անակնկալ եւ հոգ յոյճ շէշտեր գտան այս առթիւ օգտաւար ազգու դաս մը տալու համար ժողովըրդեան: Եւ սա միայն կայ մխիթարական ցաւալի ողբերգութեան մէջ որ աստիճանուն կիսախարխուլ բարոյական ցնցել հոգին խռովեց այս դէպք եւ անորնկաւ մամբ Ազգ. իշխանութեան հետեւած թեթեւեղն ալ համոզեց շատեր թէ՛ մեր ժողովներէն խոհական եւ առնական որոշմաներ դուրս կուգան ու կը քործադրուէ եղեր երբեմն...:

իւր Օղոստափառ մօր արքունեաց մէջ, այլ եւս օտար ազգաց քով:

Սակայն հորիզոնը կը մթագնէր տակաւ առ տակաւ. ահա ելի լուրեր կը հասնէին Աֆղանտանէն. Սըր Ալէքսանդր Պըրնս եւ Սըր Ուիլիէմ Մարէէկզըն սպաննուած էին. Անգլիացիք հարկադրուեցին հեռանալ Քեհապուէէ. ամբողջ զօրագունդ մը ջարդուած էր Քիպէրի կիրճերուն մէջ եւ արիւնի վաճառականութեան համար Մեծին Բրիտանիոյ ու Չինաստանի միջեւ բացուած պատերազմը կ'սպառնար երկարիլ տակաւին:

Երկրին ներքին կացութիւնն եւս ծանր կերպարան մը կ'առնուր. սահմանադրական կոչուած կուսակցութիւնը զսպուած էր, բայց երկիրը խորապէս յուզուած էր արմատեաց օրէնքին ջնջման պատճառաւ եւ քանի մը շարաթ յետոյ սպաննութեան երեք փորձեր եւս եղան Թագուհւոյն վրայ. այդ ոճրադործք քաղաքական նպատակներ չունէին բնաւ, այլ վտանգաւոր խենդեր էին որոց ուղեղը տաքցած էր ոգելից ըմպելեաց չարաչար գործածութենէն: Այդ 1842 տարւոյ աշունը նուազ մտահոգութիւն պատճառեց սակայն. բրիտանական զօրքերը Տօսկ Մուհամէտի հրոսակաց փայքալեցիներ եւ աւելցեցին զՃիլլապատ, մինչ նանքիի պարսկաց ներքեւ խաղաղութիւնը կը կնքուէր ընդ մէջ Մեծին Բրիտանիոյ եւ Չինաստանի, եւ Թագուհին իւր ամուսնոյն հետ առաջին ուղեւորութիւն մ'ընրաւ ի Սիւլտիա, որոյ քաղցր ապաւորութիւնները պատմած է հատորի մը մէջ: 1843 տարին նշանաւոր եղաւ այն տեսակցութեամբ զոր ունեցան Լուի Ֆիլիք Թագաւորն եւ Վերդոփա Թագուհին. եւ այնու զոր ունեցաւ Ն. Վեհափառութիւն Պելճիոյ Թագաւորին հետ. Քանի մ'ամիս առաջ Թագուհին աղբիկ զաւակ մը ծնած էր, Ալիս իշխանուհին, որ մեռաւ 1878ին, զոր լինելով անձնութեան զոր կը տածէր իւր ամուսնոյն շէսի Մեծ-Դուքսին եւ իւր զաւակաց նկատմամբ, որք մաղձակապ փողացաւ սոսկալի ակտով վարակեալ էին: 1844 եւ 1848 տարիները, թէպէտ իռլանտական յեղափոխութեամբ խռովեալ, այսու հանգերձ շատ աւելի հանդարտ եղան յԱնգլիա քան Եւրոպիոյ ուրիշ սր եւ է կողմն: 1843 ին սոսկալի սով մը ծագեցաւ յԻռլանտա. բայց արմտեաց վրայ դրուած օրէնքը վերջնապէս ջնջուեցաւ: 1847ին էր որ տեղի ունեցաւ տաճին արշաւանքն ընդդէմ Քաթրներու: Համայն Եւրոպիոյ մէջ յեղափոխութիւն մը ծագեցաւ. Անգլիա ցնցուեցաւ թեթեւապէս. Իռլանտա շարժեցաւ եւ Սահմանադրականը Լոնտոնի մէջ փորձեցին գոհնիկ շարժում մը որ անպատուեց զանոնք յաջո անգլ. ժողովրդեան: Մինչդեռ գահերը կը գզրդէին եւ վեհապետք արիւնահեղ ճակատամարտներու մէջ նետուած էին, բրիտանական պետութիւնը կը զօրանար ու կը վարգաւնար ի խաղաղութեան եւ կը հիւրընկալէր Լուի Ֆիլիք Թագաւորն. Անգլիոյ Թագուհին իւր չրջագեցածներն ու ճերմակեղէնները փոխ կուտար Մառի Ամէլի Թագուհւոյն: Ապանիական ամուսնութեանց գործը մոռցուած էր: 1849ին, ուրիշ խենդ մը ատրճանակի հարուած մը պարպեց Թագուհւոյն վրայ. 1850ին, պատուաւոր գերդաստանի մը վերաբերող երիտասարդ մը, տեղակալ Ալթ, համարձակեցաւ իւր գաւազանով Թագուհւոյն զարնել, որ կառքով կը ճեմէր: Այս անգամ՝ երգուեալ դատաւորք չուղեցին ներել յանցաւորին, իրր յիմար մը նկատելով զնա, եւ այդ մարդ զատապարտուեցաւ եօթնամեայ բերդարգելութեան:

Սակայն մեծ վտանգ մը կ'սպառնար բրիտանական պետութեան եւ զօրութեան, այդ վտանգ հնդկական թերակ զգոյն մէջ կը նշմարուէր: Թէեւ ապստամբ ցեղեր ընկճուեցան, բայց ապստամբութիւնը կը գոռար Հնդկաստանի մէկ ծայրէն միւսն: Այս միջոցին Սըր Բուլքեր Բիլ ձիէն իշխում մեռաւ յանկարծ. սակայն ի կենդանութեան մեծապէս օգնած էր Ալպէյի իշխանին որպէս զի միջազային մեծ արուեստահանդէս մը բանայ 1851ին: Այդ արուեստահանգէս իշխանին յաղթանակն եղաւ:

Թագուհին մի առ մի կ'ընդունէր իւր իմաստուն խորհրդականներն եւ անոնց փոխան կը վստահէր միայն Լորտ Ջօն Բուսէլի վրայ, որ զիւրամտով թաւորութեան տէր մէկը չէր, եւ Լորտ Բալմէրսը ընդ վրայ որ Ն. Վեհափառութեան առջեւ այնպէս ցոյց կուտար թէ կ'ընդունէր Թագուհւոյն բոլոր որոշումներն, եւ նախարարական պաշտօնատունը մոտեցուն պէս, իւր խոստման բոլորովին հակառակը կը գործէր: Այս պատճառաւ խորին դժգոհութիւն մ'ունեցաւ Թագուհին, վստահ չիւր Լորտ Բալմէրսըն չէր երկնէր պաշտօնագրոց խմատն ու խմբագրութիւնը բոլորովին փոխել: Այդ պարագայից մէջ Թագուհին այնպիսի հաստատակամութիւն մը եւ սրամտութիւն մը ցոյց տուաւ որք պահպանեցին դաժու արժանապատուութիւնն ու թագին առանձնաշնորհումներն. իւր խիստ ձեռք խմբագրեց պաշտօնագիր մը որ Լորտ Ջօն Ռուսէլի միջոցաւ Լորտ Բալմէրսը ընդ յանձնուեցաւ եւ որով, խիստ դաւ մը կ'առնուր իւր պարտականութեանց վրայ զորս լքած էր: Սահմանադրական միապետութիւնը չէր ուզեր եւ չէր կրնար խոտարնիլ պետական անձի մ'առջեւ որ անխտելի արժանիք ունենալով հանդերձ, գրեթէ իւր բոլոր կեանքն անցուց գործերը խառնակելով:

Երկրորդ պատերազմ ընդդէմ Քեաթրներու, երկրորդ պատերազմ ընդդէմ Պիրմանիոյ եւ միացումն Բէկուի անգլ. ստացուածոց, ապա նախարարական տաքնապ. Լորտ Տէրպի եւ Պէնճամին Տիգրայէի պահ միշխանութեան գլուխ անցան, ապա Լորտ Ալքէրտին՝ Լորտ Ջօն Ռուսէլի հետ, եւ վեներադարձ Լորտ Բալմէրսը ընդ. պահպանողականը եւս պահ մը յաղթական ելնելէ յետոյ, իշխանութեան ղէկը թողին դարձեալ Լորտ Բալմէրսը ընդ որ հրեայներն ընդունել տուաւ խորհրդարանին մէջ եւ փոխարքայութիւն մը հաստատեց հնդկական ընկերութեան վարչութեան տեղ եւ այնու հետեւ յաղթուեցաւ Լորտ Տէրպիէ Պ. Տիգրայէիէ: Այս է ահա Մեծին Բրիտանիոյ խորհրդարանական պատմութեան ուրուագիծն 1851էն ց1859 եւ դիւրին է ըմբռնել թէ նախարարական այս անընդհատ փոփոխմանց մէջ ինչ թանկագին ծառայութիւն մատուցին Ալպէրդ իշխանին խորհուրդները:

Երբէք արտաքին գէպերն այդքան կընճռոտ չէին եղած: Նոր աշխարհավարութիւն մը երեւան կուգար. բարեկամական համաձայնութիւն մը՝ ընդ մէջ Ֆրանսայի եւ Անգլիոյ՝ կ'ամրապնդուէր Խրիմու պատերազմէն յետոյ, անգլո-Ֆրանսական արշաւանք ի Չինաստան, միահաղոյն յաղթանակօք, եւ արուեստից ու վաճառականութեան տրուած զարկովը Նաբոլէոն Այսյեր եւ Վերդոփա Թագուհւոյն դաշնակցութիւնն անգլ. ժողովրդեան եւ Ֆրանսական ժողովրդեան դաշնակցութիւն էր. դաւոր թշնամութիւնը կարծես հմայիլով կ'անհետանային, եւ ազատ փոխանակութեան դաշնագիրը կը պսակէր այս բառաստիկ յեղաշրջումն:

Եթէ պատերազմի յաղթանակը նպատակաւոր երկու մեծ ազգաց, Հնդկաստան յեղափոխութիւն (1857) մահուան զանգի մը մը նման հնչեց այդ գոհացուցիչ պարագայից մէջ, Հազիւ ստորագրուած Փարիզի դաշնագիրն, հազիւ Նաբոլէոն Այսյերն եւ Էմիլի Կայսրուհին ընդունած էին ի Ռինտսոր, հազիւ Վերդոփա Թագուհին փոխադարձ այցելութեան գնացած էր 1856ի արուեստահանգիսի միջոց երբ կոտորածը սկսան ի Հնդկաստան, ապստամբութիւն որ հակադրական երկր մ'առած էր, ահ ու սարսափ ազդելով տոնի մէջ, եւ ազդուապէս սանձուեցաւ ռիթ տուաւ անգլիացի հայրենասէր իրաւոր գինուորաց, միանգամ եւս տալ իրենց անձնութեան իշխան տա Թագուհին եւ առ բրիտանական պետութիւնը:

Այն համար 1861ի աղիտաբեր թիւնն: Մարտ ամսոյն Թագուհին իւր մայրը, Քէնդի դքսուհին, եւ դեկտեմբեր 14ին Ալպէրդ իշխանը կը մեռնէին Ռինտսորի պալատան մէջ:

Այրի՛. Ասեն ինչ կը բովանդակէ այս քաջիպ պարբերութիւն մը, չկայ հետեւեալ կան ստացուած մը որ աւելի սոսկալի պիւր բացատրեն վիշտն ու թախիծն անոյն, Թագուհւոյն եւ մօրն:

Երբեք միայն իւր պատմութեան չորս մանչերն ու հինգ աղջիկները, զորս վարդ մասնակից կը լինէր իւր այլ պարսպը, բաւական չէին իւր յաւերժական յիշատակը համարելու: Անգլիացի պետ երկու անձինք գրաւած են զայն իրենց ուսան փայլով Պէնճամին Տիգրայէի եւ լիւի էյուսարդ Ալատուքըն: Լորտ Բալմէրսը կը մեռնէ 1866ին. Լորտ Տէրպի, իւր հակառակորդը, կը հետեւի նմա ի գերեզման իշխանութիւնը միմեանց ձեռքէ կը երկու մեծ ատենաբանները, խորհրդարանական երկու հզօր ըմբիշները, մինչեւ վայրկեանն յորում Պ. Տիգրայէի, ի վեր կում Պիքսֆիլտ, կը մեռնի յանկարծ 1867ին, Թագուհւոյն տալէ յետոյ Հնդկաստան կայսերական թագն: Եւ այդ վաղեմի ղաւանագիրաց մէջ Պ. Ալատուքըն միայն կը գուռն կը մնայ, նման հինաւուրց կանգնող մը զոր ոչինչ կրնայ տապալել. միայն եթէ ոչ նոր գէթ աւելի երիտասարդ անհաւորութիւններ կը խոտանան շարունակել իրենց առաջնորդողաց աւանդութիւններն եւ սոսնց մէջ պէտք է յիշել Լորտ Սալլաքըրին ու Լորտ Ռընտուֆ Չըքսթըն:

Այն քաղաքական դէպքերու միջոց որք տեղի ունեցան վերջին քսան-հինգ մաց մէջ, այն պատերազմներու միջոց զորս Անգլիա մեծ քաղաքութիւն կողմէր դարձակելով իւր գաղթականութիւններ իրեն կցելով մեծատարած հազեր, փոփոխութիւն կողմէ անգլիական բարք ու սովորով փոփոխուէին: Մեծին Բրիտանիոյ ոստ Թոթուեց իւր թմբուութիւնը. փառապաշտներ եւ հոյակապ չէնքեր կատարուեցան որք կը բարձրանան այժմ անկողմ, նոր ուղիներ բացուած են. դպրոց

Է Ֆ Է Ն Տ Ի Ն

(2)

(ՆՈՐԱՎԵՂ)

Թիւնք, գիտութիւնք եւ արուեստք կը բա-
ջալերուին, վայելչութիւնը կը մշակուի պեր-
ճութեան եւ գիւրակեցութեան, մինչ ա-
նընդհատ միմեանց կը յաջորդեն յոյժ շա-
հաւետ եւ օգտաւէտ արուեստահանդէսք։
Ասոնց նախաձեռնութիւնը կը պատկանի
կալէսի իշխանին, որոյ ցոյց տուած ե-
ռանդն հանրային օգտին համար, առածի
կարգ անցած է։ Եւ անդին, բանաստեղծք,
վիպասանք ու պատմագիրք իրենց ճիւղե-
րուն մէջ կը նպաստեն անգլլ ազգին այս
վերակենդանութեան։

Միմիայն Իսլանտա կը հեծէ, Իսլանտա
որ կը կառավարուի Անգլիացեաց երկաթեայ
ձեռամբ, որ կը սարսափի Ֆէնիաններէ-
րէն, որ կը խնայահի Բառնէլեանց ագա-
րակային զաւակացութեան գիւտատո-
րութեան ներքեւ, որ ինքնօրինութիւն կը
խնդրէ՝ կասկածուած, անվստահ, որ գետ-
նաբարձ կը յածի թշուառութեան մէջ եւ
կարող է ամենայն ոճրագործութեանց եւ
ամեն վեհանձնութեանց՝ մեղսակից ունե-
նալով գաղտնի եւ ուժանակն, որ կը մեռնի
անգործութենէ, կը հիւսի քաղաքական ու
կրօնական կոնքերով, որ ոչ մէկ բանէ կը
հրաժարի եւ ամենայն ի՛նչ կը պահանջէ։
Իսլանտա այն մեծ խնդիրն է զոր ի զուր
կը փորձեն լուծել ճնշողական միջոցներով եւ
որ տակաւին երկար ժամանակ մտահոգու-
թիւն պիտի պատճառէ Ալպիոնի որդւոց,
հակառակ պատճառն օրինաց որ կը բուռ-
արկուի։

Վերջոյ որիա Թագուհին կորոյս նաեւ իւր
գուսարն, Ալիս իշխանուհին, եւ կրտսեր
որդին՝ Ալպանիի դուքսն։ Այն քրիտոնէա-
վայել համակամութիւնը զոր ցոյց տուաւ
այդ գառն սուգերու միջոցին, ընդհանուր
համակրանք հրաւիրեցին իւր վրայ, եւ
անգլլ ազգին բոլոր գասակարգերը մեծա-
պէս գնահատեցին այն միւսթարութիւնը
զոր 1875ին տուաւ հէգ տարագրելոյն (Էօ-
ժէնի Կայսրուհւոյն) ի Զիլդպիւրսդ, Նո-
րոլէոնի մահուան ժամանակ, եւ 1879ին
երբ գահաժառանգ իշխանի զիւցազնական
մահուան լուրն հասաւ ի Լոնտոն։

Սպանութեան երկու փորձեր եւս ե-
ղան. վերջինն զոր փորձեց Բոժէր Մէլլին
Ռինտտորի կայսրանին մէջ (1882) այնպիսի
նողկանք եւ զայրոյթ պատճառեց որ զգ-
ուարաւ կարելի եղաւ ոճրագործն ազատել
ամբոխին կատաղութենէն։

Պարսպոյ այն հազուադէպ ժամերը զոր
կը թողուն նմա քաղաքական հոգեր, Թա-
գուհին գրեթէ կ'անցունէ Վէլլապալի Բի-
նալիս-Բեան ի Սիւլթան, 1841էն 1861 յետակ
ու ճոխ ոճով գրուած հատոր մ'է որոյ հը-
րատարակութիւնը մեծ համբաւ հանեց։
Այդ հատորին յաջորդեց երկրորդ գիրք մը
«Կիլիկի յիշատակներ Բի-Կեանց օրագրէն» որ ար-
գարացի յաջորդութիւն մ'ունեցաւ այն
գողտիկ նկարագրութեանց համար զորս
կը պարունակէ՝ Ն. Վեհափառութիւն նոյն-
պէս անձամբ հսկած է Կիլիկի զօրավարի
գրչէն երաժ մէկ հրատարակութեան որ կը
կոչուի «Ալպէրդ իշխանի կենաց վերջին
տարիները» եւ գլխաւոր նիւթ մատակա-
րած է Սըր Թ. Մարդէնի սքանչելի պատ-
մութեան «Կեանք Ալպերդ իշխանին» անուն։

Այսպէս անցան ահա յիսուն տարիներն
իշխանութեան մը որ գարաջլուս մը կը
կազմէ եւ բրիտանական պետութեան մե-
ծութիւնը պիտի աւելցունէ այն երկար
տարին՝ որ միջոցին զոր համայն անգլիա-
կան ազգը կը խնդրէ Աստուծոյ՝ պարգե-
ւել իւր Թագուհւոյն։

(Մէթըլէ Ընթերցող)

Գասպար աղա ձերացած էր. մանա-
ւանդ վերջին մի քանի տարիներու մէջ գըլ-
խաւորաբար իւր որդւոյն անտանելի վար-
մունքն եւ ադիէ յառաջ եկած մտահոգու-
թիւնը տկարացուցած էին զինքն. այդ վի-
ճակի մէջ անգամ կը ջանար ամէն օր դու-
րին գլուխը գանուիլ եւ սեղանաւորու-
թեամբ գէթ իւր անական ընթացիկ ծախքն
հոգալ, առանց իւր երիտասարդութեան
օրերու մէջ գանձած ու գիւղած ոսկինե-
րուն զպէտու եւ որոց միայն Միհրանիկ
կրնար մօտենալ զինեալ գաղտնով կամ բէ-
վօլվորով մը։

Կինն ալ իրեն պէս ձերացած էր եւ
այն ատիծառ Միհրանիկի բռնած ընթաց-
քէն զզուած ու վիրաւորուած, որ դժուա-
րաւ ու կարմրելով ձգուաւ Միհրանիկն
բառերը կրնար արտասանել։

— Այո՛, ամուսնացնել հարկ էր Միհրա-
նիկն եւ իւր մօր գաղափարն ալ այդ էր.
կինը միայն պիտի կարենար ազատել զանի
այդ անբարոյականութեան հոսանքէն, եւ
ամուսնութենէ զատ փրկութիւն չկար։

Ամթ չէր նաեւ երբ կը մտածէր թէ
«տունն ալ չէնցնել պէտք էր» եւ այդ ալ
ուրիշ միջոցաւ կարելի չէր։

Որպէս զի այս յոյսեր իրականութիւն
գտնէին, պարկեշտ ու ազնիւ կին մը ճա-
րել անհրաժեշտ էր. այլ ինչպէս պիտի կա-
րենային գտնել ու ինչպէս պիտի համար-
ձակէին յանձնել այդ լալիքն ու պիղծ գըլ-
կաց կին մը որ ազնուութեան ու պարկեշ-
տութեան տիպար մ'ըլար։

Եթէ կարենանք գտնել հրաշք մ'է այդ,
կ'ըսէր շատ անգամ Միհրանիկի մայրն իւր
ամուսնոյն եւ կը յուսահատէր երբ կը մը-
տածէր թէ հրաշք գարն անցած էր։

Այլ ոսկին, այդ փայլուն ու սիրուն
մետաղն, ո՞ր գարու մէջ դադրած է հը-
րաշքեր գործելէ։

Գասպար աղա շատոնց սիրած էր Զապէլն
եւ բաւական որատեսութիւն ունեցած էր
նշխարելու նորա բնութեան համեստութիւ-
նըն եւ հոգւոյ ազնուութիւնն. ահ, եթէ կա-
րենար Զապէլն հարսնութեան առնուլ, ո՞ր-
չափ զոհ պիտի ըլլար իւր յոյսեր իրակա-
նութիւն պիտի գտնէին անկասկած եւ գե-
ղանի ու սիրուն հարս մ'ունենալու հա-
ճոյքն ալ պիտի կարենար վայելել այս ա-
մէն առաւելութեանց հետ միասին։

Եթէ կը վարանէր այսպիսի առաջարկու-
թիւն մ'ընել Պաղտատար աղայի, պատճառն
ուրիշ բան չէր բայց եթէ այն անհուն տար-
բերութիւն զոր կը գտնէր Զապէլն եւ Միհ-
րանիկի մէջ տեղ։

Ոճրագործութիւն մ'է ըրածս թէ բա-
րեգործութիւն, կը հարցնէր իւրովի. եթէ
Միհրանիկ չփութէր իւր ընթացքն ու բնա-
ւորութիւնը, մեռած էր Զապէլն եւ այդ
անմեղ կուսի մահուան պիղծապատճառն
ինք եղած պիտի ըլլար բացարձակապէս։

Բայց իւր նպատակն բարի էր եւ մի-
ջոց կ'արդարացնէր։

Երեկոյ մ'էր, երբ ըստ սովորութեան
օդի թափանչեցին մի քանիներն պարպած
եւ գլուխին տաքցուցած էին։

— Ի՞նչ կ'ըսես, Պաղտատար աղա, ալ
ժամանակն հասած անցած ալ է, Միհրա-
նիկն պիտի կարգեմ, ըսաւ Գասպար աղա։

— Ես ալ քեզի համակարծիք եմ, պա-
տասխանեց Պաղտատար աղա, շատ ազնիւ
կ'ընես։

— Շիտակը մտքէս շատոնց է Զապէլը
կ'անցնի. հրամանքդ ի՞նչ կ'ըսես։

— Այդ ալ խօսք է, ի՞նչ պիտի ըսեմ,
շատ ուրախ ալ կ'ըլլամ. արդէն անոր ժա-
մանակն ալ հասած է, ստակ նանկ 19 տա-
րեկան պիտի ըլլայ Ս. Սարգիսին, անանկ
կը կարծեմ։

— Ըսել է, կը հաճիս։

— Հապա՛, ինչո՞ւ չէ. քեզի պէս չնորհ-
քով աղա մարդ մը ո՞ւր պիտի գտնայ, թող
շատ չնորհակալ ըլլայ որ ատանկ պատիւ մը
կ'ընես իրեն։

— Ուրեմն խօսքդ խօսք է, հարցուց
Գասպար աղա։

— Խօսքս խօսք է. եթէ կ'ուզես քիչ ա-
տենէն հարսանիքն ալ կրնանք ընել, պա-
տասխանեց Պաղտատար աղա եւ երկուքն
ալ «հարկաւրէն» այսչափ շուտ եւ դիւրաւ
աւարտելէն գոհ։

— Է՛յ, Խեղճի՛ն տեսներ, ըսելով մի
քանի բաժակներ եւս պարպեցին եւ գոհ
ու զուարթ իրարմէ բաժնուեցան։

Պաղտատար աղայի համար բնաւ գըժ-
ուարութիւն մը չկար. Զապէլ կոյր հնա-
ղանդութիւն մը կը պարտէր. տիկին Աննա
գործի չէր խառնուեր եւ ի՛նչ որ ալ ըլլար
հոգը չէր, նա մանաւանդ աւելի գոհ կ'ըլ-
լար երբ Զապէլ անգամ մը հեռանար տու-
նէն. իսկ Պաղտատար աղայի ուրախութիւնն
աննկարագրելի էր։

Իսկ Գասպար աղայի գալով, բաւական
մեծ դժուարութիւններ կ'սպասէին իրեն.
չէր գիտեր թէ Միհրանիկ պիտի հաճէ՞ր
ամուսնանալ եւ հակառակ պարագայի մէջ,
ինչպէս պիտի կարենար համոզել զինքն.
Գասպար աղայի կինն շատ գոհ էր, զար-
մանալով կը զարմանար եւ չէր ուզեր հա-
ւատալ. հրաշք մ'է այս, հրաշք, կ'ըսէր,
երբ կը տեսնէր թէ կը հաճէին այդ անը-
ման աղջիկն, մարդ կուրթեան աղտն ու ա-
մօթն համարուող իւր զաւակն կնութեան
տալ. չէր գիտեր խեղճ թէ՛ թշուառ Զա-
պէլը՝ խոզերու առջեւ ձգուած մարգարիտ
մ'էր։

Մի քանի օրեր յետոյ, զիշեր մը, Միհ-
րանիկը ձեռք ձգեց Գասպար աղա եւ յայտ-
նեց իրեն թէ զինքն ամուսնացնելու մտա-
գիր էր. Միհրանիկի դիմաց վրայ գ'ըգո-
հութեան ամէն կարելի եղած արտայայ-
տութիւնք տեսնուեցան. Գասպար աղա
խել մը խրատական խօսքերով ջանաց հա-
մոզել իւր զաւակն. այլ նա անդրդուելի կը
մնար միշտ. կանուխէն վարժեցուցած էր
իւր ականջներ՝ չլսել այդ տեսակ խրատ-
ներ ու խորհուրդներ։

Միհրանիկ յայտնեց թէ անկարելի էր իւր
ամուսնութիւն սա ակներեւ պատճառաւ
թէ անգործ մէկն էր եւ թէ չէր կարող
ապրեցնել իւր կինն, որ իւր պարտքն էր,
աւելցնելով միանգամայն թէ պիտի հաճէր
ամուսնանալ եթէ հայրը մի քանի հարիւր
ոսկիներ իւր զրամագլուխ իրեն յանձնէր
որպէս զի ինքն ալ, առանձին սեղանաւո-
րութեամբ, կարենար թէ՛ իւր եւ թէ՛ կնոջ
պէտքերն հոգալ առանց իրեն վրայ բեռ
մ'ըլլալու։

Համոզեց իւր հայրը թէ՛ այդ գումարն
իւր նախորդներու դժբաղդութեանց չպի-
տի պատահէր, եւ թէ ինքն իւր կողմանէ
ամէն ջանք ի գործ պիտի դնէր որպէս զի
փոխանակ պակսեցնելու օր ըստ օրէ գայն
կրկնապատկէր։

Գոհ եւ գոգոհ էր միանգամայն Գասպար աղա . այս, Միհրանիկ կը հաճէր . այլ պայմանաւոր հաճութեամբ մը միայն զոր պատկանելի գումարով մը կը հարկադրուէր ձեռք ձգել . խիստ դժուար էր այդ Գասպար աղայի նման ազահ մէկու մը համար , այլ սակայն իւր կեանք թախանձանքը մէկ կողմէն , Միհրանիկի կեղծ ու խարդախ լեզուն միւս կողմէն եւ նա մանաւանդ հեռուն՝ հորիզոնին վրայ՝ նշմարել կարծած յուսոյ պայծառ աստղերը , կակղեցուցին իւր սիրտն եւ խոստացաւ յանձնել իւր որդւոյն 400 Օսմ . ոսկի պակադրութեան օրն :

Գոհունակութեան ժպիտներ փայլեցան ամէն կողմ եւ Միհրանիկ 10 տարիներէ ի վեր առաջին անգամն ըլլալով երկու ջերմ համբոյրներ դրոշմեց իւր ծնողաց ձեռաց վրայ , եւ ճապրիս զաւակս , քեզ տեսնենք ներքով վերջացաւ արարողութիւնն :

Հետեւեալ օրն ամբողջ գիւղը տեղեկացած էր այս անակնուկելի եղելութեան եւ ոմանց կիրքն , ոմանց ցաւն եւ ամէնուն զարմանքն էր չարժած : Ամէն անոնք որք քիչ շատ կը ճանչէին Զապէլն , եւ չկար մէկը որ չճանչնար Միհրանիկը , կը ցաւէին թէ դժբաղդ աղջիկն այդպիսի ճիւղի մը ճիրանաց պիտի մատնուէր , երկար ատեն դժբաղդութեան ծանր լուծին տակ հեծելէ վերջը . շատեր կը պատրաստուէին երթալ յայտնել ամէն բան , նկարագրել Միհրանիկն իւր ամէն մութ գոյներու տակ եւ ջանալ խզել այդ անյարմար միութեան կապը . մինչեւ իսկ պատրաստած էին մի քանի երթաւորներ՝ որք եթէ Գասպար աղայի չափ հարուստ չէին , ֆիզիքական ու բարոյական տեսակէտով շատ ու շատ կը գերադանցէին զՄիհրանիկն :

Առաւօտ մը փողոցին դուռը զարնուեցաւ եւ բաւական տարիքոտ կին մը Պաղտասար աղայի հետ տեսնուելու փափաքն յայտնեց . հարկ չէ ըսել թէ Պաղտասար աղայէ ցուրտ ընդունելութիւն մը գտաւ . խեղճ կինը բոլոր ճիգը թափեց ետ կեցնելու համար Պաղտասար աղան Զապէլը Միհրանիկի հետ ամուսնացնելու համար յղացած գաղափարէն . այլ ի զուր . կարծես չէր լսեր այն նողկալի իրողութիւններ զորս կինն երգմամբ կը ջանար հաստատել . Պաղտասար աղա չէր ուզեր համոզուիլ բնաւ եւ բազմութիւն էին իւր առարկութիւններ որոց համար չէր հաւանք բաժնուիլ Գասպար աղայէն :

Կ'ըսէր թէ Գասպար աղան հարուստ մէկն էր եւ այդ հարստութիւն իրեն համար ալ օգուտներ կրնար ունենալ . կ'ըսէր նաեւ թէ՛ խիստ բարի մարդ մ'էր եւ այդ պատճառաւ շատ կը սիրէր՝ ու կը յարգէր զինքը . թէ շատ անգամ օղի խմելու համար իրեն կ'ընկերանար եւ որ ամենէն հաճելին էր օղիին ստակն ինք կը վճարէր . թէ Միհրանիկի սրկայայտութիւնը բնաւ հոգ չէր եւ Զապէլի ալ վնասակար չէր կրնար ըլլալ . թէ կեանք մը ամենէն նուիրական պարտականութիւնն ու արժանիքն իւր ամուսինը կը թելու մէջ կը կայանար . թէ Զապէլ իրեն համար արտաքին կարգի բացուած ծախքի դուռ մ'էր եւ պէտք էր ծամ մ'առաջ այդ դուռը գոցել , որովհետեւ իւր քրտակին կ'սպառնար . թէ ինք 19 տարեկան եղող աղջկան մը պէտքերն այլ եւս չէր կրնար հոգալ . ահա այս պատճառներու համար սոյն ամուսնութիւնն ո'չ թէ անյարմար կը գտնէր , այլ ընդհակառակն շատ յարմար , մինչեւ իսկ բաղդ մը կը համարէր , զի խնդրեմ որ այս խնդրոյն վրայ այլ եւս

չխօսիք , արդէն շուկայ երթալու ժամանակ ալ հասած է՝ ըսաւ ու բաժնուեցաւ :

Կինն՝ յուսարեկ եւ ճարահատեալ , չուզեց խօսիլ այլ եւս Պաղտասար աղայի կեանքէն , որովհետեւ նա իւր կատարեալ անտարբերութեամբ հանրածանօթ էակ մ'էր . գոցեց դուռն հառաչ մ'արձակելով իւր սրտէն ու հեռացաւ տրտմազին :

Երեկոյին Գասպար աղա՝ օղիի չիչ մը ձեռքը բռնած Պաղտասար աղայի հետ վերադարձաւ . մի քանի բաժակ օղի պարպելէ եւ լաւ մը գլուխին տաքցնելէ յետոյ , սկսան նշանտուութեան , հարսանեաց հանդիսի վրայ խօսակցելու իրենց սկզբունք դրին ծախսել այնչափ քիչ , որչափ կարելի էր . այդ մասին երկուքն ալ իրենց կարծիքն յայտնեցին ու բացատրեցին եւ երկուքն ալ համակարծիք գտնուեցան :

Պակադրութեան Ս . Խորհուրդը կրօնական արարողութիւն մ'էր եւ մեղք էր անշուշտ խել մը աշխարհական արարողութեանց հետ խառնել զայն եւ ծանր ծախսեց երթարկուիլ :

Գասպար աղա՝ օժիտ ալ չէր պահանջեր եւ այդու Պաղտասար աղայի գործը մեծապէս կը դիւրանար :

Միհրանիկ վերջին ծայր հնազանդութիւն խոստացած էր իւր հօր . յայտնած էր թէ պատրաստ էր ընդունելու իւր ամէն կարգադրութիւնները սա պայմանաւ միայն որ 400 ոսկւոյ գումարն իւր ամբողջութեանէն բան մը չկորսնցնէր եւ թէ պակադրութեան օրը պակի խորհուրդէն քիչ մ'առաջ իրեն յանձնուէր . մինչ իսկ չէր ուզեր աղջիկը տեսնել , առարկելով թէ ծրնողքը գէշ բան մը իրեն չպիտի կամենային անտարակոյս :

Այդ երեկոյին տաք գլխով խել մը տաք խօսակցութիւններ ընելէ վերջ , աղջիկտեսի , նշանտուութեան եւ հարսանեաց օրերն որոշեցին եւ ուրախ ու զուարթ իրարմէ բաժնուեցան :

(Շարունակել)

ԹԱԼԻԼԷ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Յ Ո Ս Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Յունիս 27էն Յունիս 3

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բ . Դուռը չորեքշաբթի օրը շրջաբերական ծանուցագիր մ'ուղղեց մեծ Տէրութեանց ըով գտնուող օսմ . դեսպանաց , որով կը ծանուցանէ թէ պուլկար կառավարութիւնը պաշտօնապէս իրեն հաղորդած է Սաքս-Քապուրկ-Կօդայի ֆէրտինանտ իշխանին Սոպրանյէի կողմէ՝ Պուլկարիոյ իշխան ընտրուիլն եւ սորա ընդունելութիւնն : Հետեւաբար կը հրաւիրէ օսմ . դեսպանները զեկուցանել զայս Տէրութեանց եւ անոնց արամադրութիւններն իմանալ , ըստ որում անոնց հաւանութիւնն անհրաժեշտ է սոյն ընտրութեան վաւերացման համար :

—Ֆէրտինանտ իշխանին ընտրութենէն անմիջապէս յետոյ , Պ . Բատսլավովիի նախարարութիւնն հրաժարական մատոյց եւ նոր նախարարութիւն մը կազմուեցաւ իրեն պետ ունենալով զՊ . Սոպրանյէ . որ կը վարէ միանգամայն դատական եւ երկտական նախարարի պաշտօններն : Արտաքին գործոց

նախարարի պաշտօնը վերստին յանձնուած է առ Պ . Նաչէվիչ . Ներքին գործոց նախարար անուան եցաւ Տր . Սոքրանյէ , Պատերազմական նախարար՝ հազարապետ Բեդերով . որ պուլկարական բանակին լաւագոյն սպայից մին է եւ կրթական նախարար՝ Տր . Չոմաքով , Բուժէլիցի մը :

—Բեդերսպուրկէ կէս-պաշտօնապէս կը գրուի թէ Քոպուրկի իշխանը չպիտի կրնայ վարել Պուլկարիոյ իշխանութիւնը , քանի որ Ռուսիա չպիտի վաւերացնէ անոր ընտրութիւնն , եւ երբ այս ընտրութիւն եւս բացասական արդիւնք տայ , պիտի հասկցուի թէ Պուլկարիոյ մասին ոչինչ կրնայ որոշուիլ առանց Ռուսիոյ հետ համաձայնութեան :

—Քաղաքային պատերազմին վերջ տալու յուսով , Աֆղանստանի Էմիրն ընդհանուր ներում չնորհեց ապստամբաց , եւ թողուց ո'չ միայն յետամնաց տուրքերն , այլ եւ առաջիկայ երկու տարուց տուրքերը :

—Մէհտիին յաջորդը վերստին նամակներ կը ղրկէ առ Վեհ . Սուլթանն եւ առ Թագուհին Անգլիոյ , բայց այս անգամ Սուլթանի ճամբով , որովհետեւ Քահրէի ճամբով ղրկածներն իրեն հասցէին չեն հասած :

—Փարիզէն յուլիս 13 թուական հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բրանսին , որ Մոնդէնը փողոցին մէջ երեք կին սպաննած լինելու ամբաստանութեան ներքեւ կը գտնուէր եւ ոյր հարցաքննութիւնը ու դատաստանն հետաքրքրած էին զհամայն սլաւարկ , մահուան դատապարտուէր է Սէնի եղբունադատ ատենին կողմէ :

—Դանիոյ Թագաւորն , հայր Ուէյլի իշխանուհոյն , եւ աներ Ռուսիոյ կայսեր , ամսոյս 4ին մեկնեցաւ Լոնտոնէ յատուկ կառավարով . եւ Տուվրէ չոգենաւ նստելով վերադարձաւ Բոֆէնհայմ . Անգլ . զայս մը զօրք բարեւի կեցած էր կայարանին մէջ , եւ ապա . արքայական գերդաստանին շատ մը անդամք եկած էին հրաժեշտի ողջոյնը տալու . Ն . Վեհափառութիւն հայրական սիրով ողջագուրեց իւր դուստրն , Անգլիոյ ապագայ Թագաւորին ամուսինը :

Ն Ե Ր Ք Ի Ն

Հանրօգուտ շինութեանց նախարարութեան արուեստագէտ խորհրդական եւ խրճուղեաց ու կամրջոց անօրէն Պ . Կալան , միանգամայն արուեստագիտաց ժողովին նախագահ անուանեցաւ . իսկ խճուղեաց եւ կամրջոց տնօրինութիւնն յանձնուեցաւ նախորդ առաջին քարտուղար Ֆիքրի Էֆէնտիի :

Նոյն նախարարութեան երկաթուղեաց տնօրէնի օգնական անուանեցաւ Մարկոսեան Արամ Էֆէնտի , որ միանգամայն կը պահէ իւր կեղծական Գոմիսէրի պաշտօնը :

Խճուղեաց եւ կամրջոց տնօրէնի օգնական անուանեցաւ Սեւանիկի առաջին երկրաչափ Արսլանեան Գէորգ Էֆէնտի :

Այս վերջին երկու պաշտօնեայք միանգամայն անգամ են Արուեստագիտաց ժողովին :

—Վեհ . Սուլթանին հրամանաւ զինուորական քննիչ յանձնաժողովոյ անդամ անուանեցաւ Հիճադիի նախորդ կուսակալ եւ կայս . թիկնապետ Ջէմիլ փաշա . Ն . Վեհափառութիւն հրամայեց նոյնպէս որ Ջէմիլ փաշա , բացի ի թիկնապետի ամսաթոյնէն , ամսական 5000 զրք ի թոշակ մ'ստանայ կայս . անձնական Կանձէն :

—Թուրք լրագիրք կէս-պաշտօնական կերտու կը ծանուցանեն թէ Քարբերդի նախորդ կուսակալ Հաճի Հասան պէյ վերահաստատուած է իւր պաշտօնին մէջ եւ թէ Քոնստանդնուպոլսոյ անուանուած է Քարբերդի նախկին կուսակալ Նաֆիէ-Ֆէնտի :

—Սուլթան Ջաֆրի ոսկեքորակի հանքաց շահագործման մենաշնորհս կայս. հրովարտակն յանձնուած է արտօնատեսարց, հետեւաբար աշխատութիւնը պիտի սկսին ի մօտոյ :

—Հրամանաւ Յըմտական նախարարութեան, արքունի Փողերանոցն սկսած է աւրուած արծաթ դրամներ ընդունիլ, փոխարէնը 20 օրուան մէջ վճարելու պայմանաւ մուրհակներ յանձնելով, եւ զանոնք քառորդ Մէճրիտիյէի վերածել որոցմով պիտի վճարուի աւրուած դրամներու արժէքը, Մէճրիտիյէն 19 զրուշի հաշուով :

—Ճրանակաւ խորհրդարանը նոր օրէնք մը քուէարկեց որուն համաձայն սգելից ըմպելեաց վրայ առնուած մաքսատուրքը բարձրացուած է, մէն մի հէքդոլտորի համար՝ 30 Փրանքի տեղ 70 Փրանք : Այս տընորինութիւն իւր հակահարուածն ունեցած է թուրքիս, վասն զի տեղացի բազմութիւ վաճառականք որք ոգելից ըմպելիք կը զրկեն ի Ճրանսա, հեռագրաւ հրաման ըստացեր են իրենց թղթակիցներէն այդ ըմպելեաց առաքումը դադրեցնել առ այժմ :

—Այս, Լիւսի մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ այս երկուշաբթի օր ի ներկայութեան Մեծ-Նպարքոսին, Դատական եւ Կրթական նախարարաց, պետական բարձրաստիճան պաշտօնատարաց եւ երկուսն խառն բաղմութեան մը : Վեհ, Սուլթանի կողմէ յատկապէս զրկուած էր պաշտօնական առաջին քարտուղար Սիւրէյա փաշա որ քաջալերական խօսքեր ուղղեց վարժարանին տնօրէնութեան եւ աշակերտաց, յաւարտ հանդիսին բանախօսութիւն մ'արտասանեց Կրթական նախարար Միւնիֆ փաշա : Աւասիկ չըջանաւարտից անուանըն :

Այս տարի Դպրութեանց վկայագիր ըստացած են՝ Ձէքի էֆ. Ֆէվզի էֆ. Սայիտ էֆ. Սատրի էֆ. Հիւլի էֆ. Պագրի էֆ. Միւհիէտին էֆ. Մուսա էֆ. եւ Անսոթասիատիս էֆէնտի :

Գիտութեանց վկայագիր ստացած են՝ Սայիտ էֆ. Արապեան էֆ. Սղաւրօ էֆ. Միւհիէտին էֆ. Ձէքի էֆ. Հիւլի պէյ, Մակագեան էֆ. Բէրդէվ էֆ. Ենուքէ էֆ. Ֆէրնանտէզ էֆ. Մուսա էֆ. Թեւեան էֆ. Սատրի էֆ. Տուպուն էֆ. Միւլ էֆ. Մաեէր էֆ. Թումա էֆէնտի :

—Ամասիոյ յոյն մետրապոլիտ Տ. Սոփրոնիոս մեռաւ ի Մաքրի գիւղ :

—Թէքէմաշը Հաֆէթաշ լրագիրը կայսերական ներման արժանանալով, վերստին հրատարակուիլ սկսած է :

—Գերմանական դեսպան Պ. տը Բատովիճ իւր մեկնումը շաբաթ մը յետաձգած է, վասն զի այս օր (ուրբաթ) պատիւ պիտի ունենայ Վեհ, Սուլթանին ներկայանալու եւ վաղը պիտի մեկնի մայրաքաղաքէս :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Օրուան դէպքն է զայթակղական կըրկնամուսնութիւն մը որ շաբթուս մէջ զբաղեցուց տեղական հայ եւ օտար մամուլն :

Եւ ընդհանուր խօսակցութեան. առարկայ եղաւ ամենուրեք : Աւասիկ այդ ցաւալի եւ զելութեան պարագայները : Վճռալինը տենի անդամներէն Շահպազ Կարապետ էֆէնտի տասն-հինգ տարի առաջ ամուսնացած էր Օր. Երմոնէ Նուսուֆեանի հետ եւ այս միութենէն ունեցած էր վեց զաւակներ. ժամանակէ մ'ի վեր այս եւ կին գժտեալ էին : Վերջին ժամանակներս Տիկին Երմոնէ հիւանդութիւն մ'ունէր զոր դարմանել կուտար ի Ճրանսա, ուր կը գտնուի արդ իւր մօր քով : Այս բացակայութեան միջոցին Կարապետ էֆ. Գառը գիւղի մէջ յարաբերութիւն հաստատած էր հայ-կաթոլիկ խորատաճեան Անտոնի այրի կնոջ հետ, Յուստիանէ Պետրոսեան, որ ունի երեք զաւակ : Այս ապօրէն կենակցութեան վաւերականութիւն եւ տեւականութիւն տալու յուսով, Կարապետ էֆ. երեք շաբաթ առաջ ի Բերա պաւսի արարողութիւն մը ձեւացուցած էր ի ձեռն երդմնադրութեամբ հանայն մը որոյ տնունը գաղտնի կը պահէ եւ կնքահայրութեամբ փաստաբան Մէրէֆ-Գուլի Աղբասնդը էֆէնտի, որ պէս ինքն իսկ կը յայտարարէ այս վերջինն :

Ս. Պատրիարք Հայրը լսելով այս ապօրէն ամուսնութիւնն, իւր ներկայութեան կոչեց զՇահպազ էֆէնտի, Դատական պաշտօնատան մէջ, ուր կը գտնուէր նաեւ Դատական նախարարի խորհրդական Վսեմ Վահան էֆէնտի եւ հարցաքննեց զնա որ խոստովանեցաւ ամեն ինչ եւ յայտնեց թէ իւր ամուսնութեան վաւերացումը պիտի խնդրէ Կրօնական Ժողովէն Երկու օր վերջը Կրօնական Ժողովը իւր Ս. Նախագահէն ի պաշտօնէ լսելով եղելութիւնը, կ'որոշէր թէ Կարապետ էֆ. կրնամուսին է, կը վճէր բանադրանք տարաւերժել զնա հայ եկեղեցւոյ հաղորդակցութենէն, յօրինակ այլոց : Այս միջոցին Շահպազ էֆ. աղբսագիր կը մատուցանէր Դատական Վսեմ նախարարին խնդրելով իւր անուան ջնջումն եւ այնու իւր արձակումն Հայոց Պատրիարքարանի քաղաքային իրաւասութենէն : Ճէվտէզ փաշա սոյն աղբսագիրն երկուողիւ մը Ս. Պատրիարք Հօր հաղորդեց ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն : Շարաթ օրը Խառն Ժողովն յարտասովոր նիստ գումարուելով, պատասխանագիր մը խմբագրեց առ Ճէվտէզ փաշա, յայտնելով թէ ի Թուրքիա՝ կրօնային եւ քաղաքային վիճակներն անբաժան լինելով, անկարելի է առանց անհատի մը կրօնային հանգամանքն ստուգելու քաղաքային վիճակը սահմանել : Պաշտօնադիրը կ'եղրակացնէր թէ Շահպազ էֆ. ի մատուցած խնդրագիրն առ Դատական նախարարութիւնն ոչ այլ ինչ է բայց եթէ վերահաս պատիժէն խոյս տալու հընարք մը, զի հայ եկեղեցւոյ օրինաց դէմ չարաչար մեղանշած է եւ եկեղեցական իշխանութիւնը պարտ համարած է արժան եղած պատիժը տնօրինել նորա նկատմամբ :

Այս պաշտօնագրի առաքումէն եւ բանադրանաց գրերը եկեղեցեաց քարոզիչներուն բաշխուելէ յետոյ, Ս. Պատրիարք Հայրն եւ Կրօնական Ժողովոյ ատենապետ Խրիմեան Սրբազան իրենց ներկայութեան կողմէ Շահպազ էֆէնտին երկարօրէն համոզեցին որ ետ կենայ իւր ապօրինաւոր ամուսնինէն եւ զղուժ յայտնէ, բայց Ն. Վսեմութիւն անդրդուելի մնաց : Յայնժամ չըբարեբաղանք զրկուեցան եւ կիւրակէ առաւօտ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ Կարդացուեցաւ բանադրանաց գիրն որ խոր տպաւորութիւն մը թողած է :

—Վանայ Լիւս Անապատի Թեմական

գիւղօրէից պանդուխտ ազգայինք հանրագիր մը մատուցած են Ամեն Ս. Պատրիարք Հօր, որով զառնապէս կը գանդատին Պողոս եպիսկոպոսէն որ Լիւս Անապատի վանահայրութիւնը կը վարէ այժմ : Ողբասարկուք կ'ըսեն թէ Պողոս եպիսկոպոս ամեն միջոց ի գործ դրած է վանքի միաբանութիւնը ցրուելու, այնպէս որ այդ հոյակապ վանք որ բարեկրօն միայնակեցուց ապաստանարանն էր, այսօր ունի միայն երեք խեղճ սպասաւոր վարդապետներ, լքեալ մնացորդ 6-7 տարի առաջուան պայծառ միաբանութեան : Պողոս եպիսկոպոս այդ պակասը կը լեցնէ իրմով եւ իւր հաւատարիմ վարդանով : Հորս ամիս առաջ վանքի հողերուն սահմանակից գիւղերու եւ անհատից արտերն իւրացուցեր է բռնի, վանքի անունով, եւ արտաքսեր է մէջի հայ գիւղացիներն : Աւելցուցեր է նշանտուրի դրամն եւ գիւղացիք որք առաջ 10-15 դր. կը վճարէին, այժմ ստիպուած են չորս մէճրիտէն մինչեւ 10 ոսկի վճարել նշանախօսութեան մը համար : Աղբսարկուք այս եւ այսօրինակ պարագայներ յիշելով եւ նկարագրելով իրենց ողբալի կացութիւնն, Ամեն Ս. Պատրիարք Հօր գուժը կը հայցեն եւ կը խնդրեն որ Պողոս եպիսկոպոս հեռացուի Լիւս Անապատէն եւ գիւղացւոց հողերն իրենց վերադարձուին :

—Խառն Ժողովն ի նիստ հրաւիրեալ է յառաջիկայ երկուշաբթի օր ի Պատրիարքարան : Այդ նստին մէջ, Քաղաքական Ժողովն իւր համարատուութեան տեղեկագիրը պիտի ներկայացնէ որ կը պարունակէ նաեւ Տեսուչ Խորհրդոց համարատուութիւններն :

Հաւանաբար, Յուլիս 10ի ուրբաթ օրն եւս Ազգային Ժողովն ի նիստ պիտի գումարի եւ Քաղ. Ժողովն որոյ պաշտօնաւարութեան սահմանադրական երկամեայ շրջանը լրացած է, իւր հրաժարականը պիտի մատուցանէ այդ նստին :

—Բարիզի բարձրագոյն վարժարանաց այս տարուան չըջանաւարտից մէջ երկու յառաջադէմ հայ ուսանողաց տնուանքն յիշելու բարեբաղդութիւնն ունիմք : Դեռ զգործական վարժարանի ուսանողներէն Լեւոն էֆէնտի Թուրքական Էնթեր-Նախ մրցման մէջ կատարելապէս յաջողած եւ այս առթիւ Մէնդ-Անդուան հիւանդանոցի ներքին դեղագործութեան պաշտօնին կոչուած է : Լ. Թուրքական էֆ. առաջին հայն է, կարծեմք, որ կ'արժանանայ այս պատւոյն : Նմանապէս Ջրածեան էֆ. ուսանող Հանքային վարժարանին, յոյժ փայլուն կերպիւ աւարտած է իւր ուսմանց չըջանն եւ Փարիզի օսմ. դերպան Էստափաշայի յանձնարարաբարով մայրաքաղաքս եկած է ուր կարեւոր պաշտօնի մը պիտի կոչուի Հանքաց ու անտառաց վարչութեան մէջ :

—Կուտինայի Առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Գերձակեան հիւանդ լինելով, բժշկաց խորհրդով արտօնութիւն խնդրած է Ս. Պատրիարքէն՝ օղափոխութեան համար Կ. Պոլիս գալու :

—Եղեւսիոյ առաջնորդ Միսիթարեան Խորէն եպիսկոպոսի պաշտօն յանձնուած էր Տիգրանակերտ երթալ իրրեւ այցելու հովիւ, սակայն Ն. Գերապատուութիւն հեռագրաւ ծանուցած լինելով թէ վիճակային ինչ ինչ կարեւոր գործոց պատճառաւ չէ կարող Տիգրանակերտ երթալ, Կրօնական Ժողովն որոշեց սոյն պաշտօնն յանձնել Արաբկիրու առաջնորդ Գեր. Եղեւսի եպիսկոպոսին :

—Ատանայի Երաշտութեան եւ սովին

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՆԱԿԱՆ ԿՐԶՈՆԵՐԱՐԵՆԷ ՀԵՏԵԻՆԱԿԱՆ ՀՈՏԵԼԻՆ՝ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար: Ambrosial cream, օճառուտ գութ անձիկ-ւոյ մարդու համար: Crème de Fraises մորթը կակուղցնելու համար: Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթը: Stillboideիայլ տալու համար մազերուն եւ մորու-բին: Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը: Alcoolat de Cochlearia ակալաներու համար: Eau de Chypre արդուզարդի համար: Քաշկինակի հա-մար հոտաւէտ նիւթեր՝ Hélotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-rie Christine.

977

1-26

պատճառաւ Կրօն. Ժողովն որոշեց անմի-ջապէս այդ կողմերը զրկել Սոյ միաբան Վեհապետեան Գեր. Մկրտիչ եպիսկոպոսն, որպէս զի տեղւոյն կուսակալին հետ միա-նալով ներկայ տաղնապի պահուն զարման տանի տեղւոյն ազգայնոց:

Ժողովն որոշեց միանգամայն իւր սոյն որոշումն հաղորդել Կիւլիկոյ Ս. Կաթողիկոսին:

—Բող նշանաւ մանկավարժ Պ. Դաւիթ Քալանդարեանց Ուսումնական Խորհրդոյ հետ բանակցութեամբ մէջ է՝ Կ. Պոլսոյ մէջ վարժարանաց մը հիմնելու համար:

—Տատեան Վահրամ պէյի աներ Վսեմ. Զէյնեօնի փաշա անցեալ շտաբի օր Պէշիք-թաշի Մարտահան վարժարանն այցելելով ներկայ գտնուել է գասախոսութեանց եւ գոհ մնացել է աշակերտաց ուսմանց վի-ճակէն, մասնաւորապէս մարմնամարզի յա-ջող փորձերէն ու երգերու կանոնաւորու-թեանէն:

ԺԻՒԼ ՎԵՐՆ ԲԱՆ ՋԱԶԱՐ ՓԱՐՄԱՆ ԾՈՒԼԵՐՈՒՆ ՏԱԿ

Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻԶԵԱՆ

Ժիւլ Վերնի այս հռչակաւոր գործն, որ Յրանալի ձեւաւանէն պատկուած է եւ զոր մեծ խնամով հայերէնի թարգմանած է Իւ-թիւճեան Կարապետ էֆէնտի, Արեւելի մէջ իբր թերթին հրատարակուելէ յետոյ, այժմ երկու առանձին հատոր կազմած՝ կը վաճառուի ամեն հայ գրավաճառաց քով՝ Իւրաքանչիւր հատորի գինն է 7 1/2 զրչ:

ԱՆՔԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ (ՊՈՒՍԱԿԱՆ ՎԵՊ) Գրեց Փ. ՋՈՂԲԱՊ

Կը վաճառուի, ի գին 6 զրչ. բոլոր հայ գրավաճառաց քով. Կեդրոնատե-ղին է Միացեալ Ընկերութեանց Գրա-սենեակը, Կէօյէ օղլու խան, Ղալաթիա:

ԿԱԼԶԻԻ ՄԻՋՈՏԱՍՊԱՆ ՓՈՇԻՆ

ԱՄԵՐԱՋՂՈՒ ԳԵՂ ՍԵ ՄԵԼԿՆԵ-րու, Լուերու, Ոջիներու, Ճանճերու, Մժեղներու, Մրջիներու, Թրթուր-ներու, Երեւի որդերու եւն. դէմ:

Ք. 1908 իր ծախսի 12 Փրանք. թղթ-թատարութեան միջոցաւ, 100 կրամն 1-95 Փր. է:—Գրեւոր է առ Կ. ԿԱԼԶԻ, 71, Կոստ. տէր զոմիլի, Լիոն:

Արեւելից համար Երկրայացուցիչն է Դեղագործական Մթերանոցն, Ղալա-թիոյ Մեծ փողոց 55, Կ. Պոլսոյ:

796

7-10

Ա. Զ. Դ.

Խնամակալութիւնն պատու ունի ծա-նուցանել Արդոյ հասարակութեան թէ, Արդոյի Կեդրոնական Վարժարանի առա-ջին եւ երկրորդ դասարանները կազմուած լինելով, աշակերտիլ փափաքողը կը հրա-ւիրուին օգոստոս 13էն սկսեալ շաբաթ եւ չորեքշաբթի օրերն առաւօտէն մինչեւ կէս օր ներկայանալ ի վարժարանն, կարգա-պահ էֆէնտիին արձանագրել տալու հա-մար իրենց անուններն եւ իրմէ ստանալու համար հարկ եղած տեղեկութիւններն: Մտից քննութիւնը պիտի կատարուին օ-գոստոս 23ի չորեքշաբթի օրն, առաւօտ-եան ժամ 2էն սկսեալ: Դասախօսութիւնը

պիտի վերսկսին սեպտեմ. 1ին, երեքշաբ-թի առաւօտ: Իսկ արդէն ընդունուած ա-շակերտը կը հրաւիրուին օգոստ. 29ի շա-բաթ օրը ներկայանալ ի վարժարան, ի-րենց թղթակներն վճարելու եւ նոր մտից տոմս ստանալու համար:

Խնամակալութիւն

Արդ. Կեդր. Վարժարանի

Վասն Սրտօնատեառն
Տնօրէն-Պատասխանատու
Ս. ՏԱՄԱՏԵՈՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՎ. Լ.Ք. ԵՆ ՄԱԼԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԻԼԵՐԷՆՕՒԵՆՕԹ ՄԵՐ. ԿՈՐՈՂՈՂԻՆ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկրճելով կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:


“Մէկ շիշը կը բաւէ:” Եւ քիչ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքառնած մազերը իրենց բնական գոյ-նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան: Կերկ չէ, եւ ամենեւին զեռն մը չընէր: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կեանքդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր ԿԵՐԷՆՍԻՆ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ ԼՈՒՐՆԱՆԻ ԽԱՐԿԱՆ ԽԱՐԿ ԽԱՐԿՈՂԻՆ: (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիւլ Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու եւ անգլիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր ըրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էտմընա Քարուան. Անգլիական մթերանոց, Երեւէք Գալտըրըմ. եւ Իգի-տօր Լազանտէլլա 435, Բերա Մեծ փողոց:

ՀԵՐԱՆԵԿԻՆՆ ԴԵՂԿԵՓՈՒՆԸ

ԳԵՂԵՑԿԱՅՈՒՆՈՂ ՄԵՐՍՆՈՅ ԳՈՅՆԸ, ՍԻՇՏ ԴԵՂԿԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՍ:



Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանութներէ եւ բազմաթիւ փոշի-ներէ: Ընգամ անգամ գործածելովն ալ, որ քանի-նը վարկանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեկը եւ ձեռքները պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեււքը, երեսի եւ ձեռքի ցանրը, արեւոյ-րուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մասնուել թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիւլ Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգլիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր ըրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էտմընա Քարուան. Անգլիական մթերանոց, Երեւէք Գալտըրըմ. եւ Իգի-տօր Լազանտէլլա 435, Բերա մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԵԼԵՐՈՒ

ՄԵԼԵՐՈՒ ՄԵԼԻ ՀԵՏԻՆ ԿՈՐՈՂՈՂԻՆ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ: Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa apton Row). Կոյնպէս Բարիզ ու Կիւլ Եօրք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբայր ըրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց: Էտմընա Քարուան. Անգլիական մթերանոց, Երեւէք Գալտըրըմ. եւ Ի-գիտօր Լազանտէլլա 435, Բերա Մեծ փողոց: